**СОГЛАШЕНИЕ**
**между Государственным комитетом по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусским республиканским фондом фундаментальных исследований о научно-техническом сотрудничестве**

Государственный комитет по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусский республиканский фонд фундаментальных исследований, именуемые в дальнейшем Сторонами,

руководствуясь Соглашением между Правительством Республики Армения и Правительством Республики Беларусь о научно-техническом сотрудничестве от 31 октября 2000 года,

руководствуясь взаимным желанием укреплять отношения и развивать традиционные дружественные связи между народами обоих государств,

исходя из интересов развития науки в Республике Армения и Республике Беларусь, заключили настоящее соглашение (далее — Соглашение) о нижеследующем:

## Статья 1

Предметом настоящего Соглашения является содействие развитию сотрудничества между научными коллективами и исследователями Республики Армения и Республики Беларусь с целью поддержки совместных фундаментальных научных исследований в областях, представляющих интерес для обеих Сторон.

## Статья 2

В рамках Соглашения Сторонами осуществляется сотрудничество в форме проведения совместных конкурсов:

научно-исследовательских проектов, выполняемых совместно коллективами белорусских и армянских ученых с последующим их финансированием;

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի միջև համագործակցության մասին**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամը (այսուհետ՝ Կողմեր),

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000 թվականի հոկտեմբերի 31-ին ստորագրված «Գիտատեխնիկական համագործակցության մասին» Համաձայնագիրը,

առաջնորդվելով հարաբերությունների ամրապնդման և երկու երկրների ժողովուրդների միջև եղած ավանդական բարեկամական կապերի զարգացման փոխադարձ ցանկությամբ

և ելնելով Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գիտության զարգացման շահերից,

համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

Սույն Համաձայնագրի առարկան երկու Կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համատեղ հիմնարար գիտական հետազոտություններին աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գիտական խմբերի և հետազոտողների միջև համագործակցության զարգացմանը նպաստելն է:

## Հոդված 2

Համաձայնագրի շրջանակներում Կողմերը իրականացնում են համագործակցություն՝ մրցույթների անցկացման տեսքով.

-Հայաստանի և Բելառուսի գիտնականների խմբերի համատեղ իրականացվող նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերի,

проектов по организации совместных армяно-белорусских и белорусско-армянских научных мероприятий (съездов, конференций, семинаров и т.д.), проводимых соответственно на территории Республики Армения и Республики Беларусь.

Научные направления, по которым проводятся конкурсы, положения о конкурсах, сроки и условия проведения, а также объемы и порядок финансирования определяются по взаимной договоренности Сторон не позднее трех месяцев до объявления соответствующего конкурса.

По соглашению Сторон могут быть использованы и другие формы сотрудничества в области фундаментальной науки.

Каждая Сторона также может оказывать поддержку научному сотрудничеству между учеными Республики Армения и Республики Беларусь в одностороннем порядке.

**Статья 3**

Стороны содействуют друг другу в обмене научными материалами и литературой, в том числе изданной при поддержке каждой из Сторон, при этом их взаимная передача будет производиться в соответствии с законодательством, действующим в государстве каждой из Сторон.

**Статья 4**

Стороны содействуют друг другу в проведении экспертизы научных проектов и привлечении ведущих армянских и белорусских ученых в качестве экспертов.

**Статья 5**

Охрана и распределение прав на объекты интеллектуальной. собственности, полученные в ходе сотрудничества в рамках настоящего Соглашения, осуществляются в соответствии с национальным законодательством и международными договорами государств Сторон.

Перед началом выполнения совместного проекта участвующие в его выполнении белорусская и армянская стороны (организации-исполнители) заключают между

-Հայաստանի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետությունում համատեղ գիտական միջոցառումների (համագումարներ, գիտաժողովներ, սեմինարներ և այլն) կազմակերպման նախագծերի՝ աջակցության արժանացած նախագծերի հետագա ֆինանսավորումով: Մրցույթների գիտական ուղղությունները, մրցույթների մասին դրույթները, անցկացման ժամկետներն ու պայմանները, ինչպես նաև ֆինանսավորման ծավալներն ու կարգը որոշվում են Կողմերի համաձայնությամբ համապատասխան մրցույթ հայտարարելուց ոչ ուշ, քան երեք ամիս առաջ: Կողմերի համաձայնությամբ հիմնարար գիտության բնագավառում կարող են կիրառվել համագործակցության նաև այլ ձևեր:

Յուրաքանչյուր Կողմ նաև իրավունք ունի միակողմանի աջակցություն ցուցաբերել Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության գիտնականների միջև գիտական համագործակցությանը:

Հոդված 3

Կողմերը միմյանց օժանդակում են գիտական նյութերի և գրականության փոխանակման հարցում՝ ներառյալ յուրաքանչյուր Կողմի աջակցությամբ հրատարակվածները, ընդ որում, փոխանակումը իրականացվում է յուրաքանչյուր Կողմի օրենսդրության համաձայն:

Հոդված 4

Կողմերը միմյանց օժանդակում են գիտական նախագծերի փորձաքննության իրականացման և, որպես փորձագետ, Հայաստանի և Բելառուսի առաջատար գիտնականների ներգրավման հարցում:

Հոդված 5

Կողմերը լուծում են համատեղ նախագծերի իրականացման ընթացքում ստեղծված մտավոր սեփականության հնարավոր պաշտպանության հարցեր՝ հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և իրենց ազգային օրենսդրությունը:

Համատեղ նախագծերի իրականացման գործընթացից առաջ Կողմերի մասնակիցները (կատարող կազմակերպությունները) կնքում են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության և օգտագործման մասին համաձայնագիր:

Համագործակցության ընթացքում

собой Соглашение о защите и использовании прав интеллектуальной собственности.

Полученная в ходе сотрудничества в рамках настоящего Соглашения научная и научно-техническая информация, которая не относится к интеллектуальной собственности и открыта к опубликованию в соответствии с законодательством государств Сторон, может быть открыта для мировой научной общественности путем использования общепринятых способов ее распространения.

### Статья 6

Стороны публикуют информацию, связанную с выполнением настоящего Соглашения, в своих периодических изданиях.

### Статья 7

Совместная деятельность в рамках настоящего Соглашения осуществляется в соответствии с международными обязательствами и национальным законодательством государств Сторон.

Вопросы, связанные с реализацией настоящего Соглашения, решаются путем переписки или на встречах представителей Сторон.

### Статья 8

По взаимному согласию Сторон в настоящее Соглашение могут быть внесены изменения и дополнения, оформляющиеся дополнительными соглашениями и вступающие в силу со дня их подписания.

### Статья 9

Срок действия настоящего Соглашения составляет пять лет и вступает в силу с момента его подписания.

Если за шесть месяцев до истечения срока действия настоящего Соглашения ни одна из Сторон не предложит в письменном виде другой Стороне прекратить его действие, то срок его действия автоматически продлевается на следующие пять лет.

Стороны могут досрочно прекратить действие настоящего Соглашения. В этом случае каждая из Сторон уведомит об этом другую Сторону в письменной форме за шесть месяцев до предполагаемой даты досрочного

ստացված գիտական և գիտատեխնիկական տեղեկատվությունը, երկու պետություններում գործող ազգային օրենսդրություններին համապատասխան, հրապարակման ընդունված եղանակների շրջանակներում մատչելի կլինի համաշխարհային գիտական հասարակությանը:

### Հոդված 6

Կողմերը հրապարակում են սույն Համաձայնագրի կատարման մասին տեղեկատվությունը իրենց պարբերական հրատարակություններում:

### Հոդված 7

Համատեղ գործունեությունը՝ ըստ սույն Համաձայնագրի, Կողմերի միջև իրականացվում է միջազգային պարտավորություններին և յուրաքանչյուր Կողմի ազգային օրենսդրության համապատասխան:

Համաձայնագրի իրագործման հետ կապված հարցերը Կողմերի միջև լուծվում են նամակագրության միջոցով կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում:

### Հոդված 8

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին համաձայնագրերով և ուժի մեջ կմտնեն ստորագրման օրվանից :

### Հոդված 9

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

Սույն Համաձայնագիրը ինքնաբերաբար կերկարաձգվի հետագա հինգ տարիների համար, եթե Կողմերից որևէ մեկը սույն Համաձայնագրի գործողության ժամկետի ավարտից վեց ամիս առաջ մյուս Կողմին գրավոր չծանուցի այն դադարեցնելու իր մտադրության մասին:

Կողմերը կարող են ժամկետից շուտ դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը: Այս դեպքում Կողմերից յուրաքանչյուրը գրավոր կծանուցի մյուս Կողմին դադարեցման ենթադրվող ժամկետից վեց ամիս առաջ: Այս դեպքում Կողմերը պարտավորվում են

прекращения действия настоящего Соглашения.

Прекращение действия настоящего Соглашения не окажет влияния на выполнение проектов, которые могут быть заключены в период его действия, если Стороны не договорятся об ином.

Совершено в «_4_» _ноября_ 2010 г. в двух подлинных экземплярах, на русском и армянском языках, причем все тексты имеют одинаковую юридическую силу.

Подписи сторон:

За Государственный комитет по науке
Министерства образования и науки
Республики Армения

Председатель Государственного комитета по науке
Министерства образования и науки
Республики Армения

________________Арутюнян С.Г.

М.П.

За Белорусский республиканский
фонд фундаментальных
исследований
Председатель Научного совета
Белорусского республиканского фонда
фундаментальных исследований

____________________В.А. Орлович

կատարել մինչև պայմանագրի դադարեցումը ստանձնած նախագծերի ֆինանսավորման պարտավորությունները:

Կատարված է ..2010.......... թ.նոյեմբերի 4...... -ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Կողմերի ստորագրությունները

Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեի կողմից

Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեի նախագահ՝

________________Ս.Գ. Հարությունյան

Կ.Տ.

Հիմնարար հետազոտությունների
բելառուսական հանրապետական
հիմնադրամի կողմից
Հիմնարար հետազոտությունների
բելառուսական հանրապետական
հիմնադրամի խորհրդի նախագահ՝

________________Օրլովիչ Վ. Ա.

**Приложение**
**к Соглашению о сотрудничестве между Государственным комитетом по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусским республиканским фондом фундаментальных исследований**

# ПОРЯДОК
## проведения конкурсов научных проектов в рамках Соглашения

### 1. Общие положения

Государственный комитет по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусский республиканский фонд фундаментальных исследований, именуемые в дальнейшем — Стороны, в соответствии с положениями статьи 2 Соглашения о сотрудничестве от "4" ноября 2010 г., настоящим Порядком определяют условия и сроки проведения Сторонами конкурсов проектов фундаментальных исследований, выполняемых совместно коллективами армянских и белорусских ученых (далее — конкурсы), а также порядок финансирования поддержанных проектов.

### 2. Условия конкурсов

2.1. Целью конкурсов является финансовая поддержка инициативных научно-исследовательских проектов, осуществляемых совместно армянскими и белорусскими учеными.

Стороны проводят конкурсы раз в два года, начиная с 2010 года.

Конкурсы проводятся по следующим научным направлениям:
-математика, механика и информатика;
-физика и астрономия;
-химия;
-биология и медицинская наука;
-науки о человеке и обществе;
-науки о Земле;
-информационные технологии и вычислительные системы;
-фундаментальные основы инженерных наук.

К участию в конкурсах не допускаются:

проекты, представленные на конкурсы по истечении объявленного срока;

**Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի միջև համագործակցության մասին համագործակցության շրջանակներում գիտական ծրագրերի մրցույթի անցկացման**

# Կ Ա Ր Գ

### 1. Ընդհանուր դրույթներ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեն և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամը, այսուհետև՝ Կողմեր, Համագործակցության մասին,«4» նոյեմբերի 2010 թ. համաձայնագրի 2-րդ հոդվածի դրույթի համաձայն, սույն Կարգով որոշում են Հայաստանի և Բելառուսի գիտնականների աշխատախմբերի կողմից համատեղ իրականացվող հիմնարար հետազոտությունների նախագծերի մրցույթների (այսուհետ՝ Մրցույթներ) պայմանները և անցկացման ժամկետները, ինչպես նաև հաստատված նախագծերի ֆինանսավորման կարգը:

### 2 Մրցույթների պայմաններ

2.1. Մրցույթների նպատակն է Հայաստանի և Բելառուսի գիտնականների կողմից համատեղ իրականացվող նախաձեռնողական գիտահետազոտական նախագծերի ֆինանսական աջակցությունը:

2010 թ-ից ի վեր Կողմերը երկու տարին մեկ կազմակերպում են մրցույթներ:

Մրցույթները անցկացվում են հետևյալ գիտական ուղղություններով.

- մաթեմատիկա, մեխանիկա և ինֆորմատիկա,
- ֆիզիկա և աստղագիտություն,
- քիմիա,
- կենսաբանություն և բժշկագիտություն,
- գիտություններ մարդու և հասարակության մասին,
- գիտություններ Երկրի մասին ,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ և հաշվիչ համակարգեր,
- ճարտարագիտական գիտությունների

проекты, уже финансируемые из государственного бюджета Республики Армения или Республики Беларусь;

проекты, получившие ранее поддержку Белорусского республиканского фонда фундаментальных исследований или других фондов и организаций Республики Беларусь и Республики Армения.

Стороны обеспечивают проведение конкурсов, независимой экспертизы заявок и финансирование поддержанных проектов каждая в своей стране.

Стороны принимают к рассмотрению заявки на выполнение проектов от творческих коллективов ученых.

2.2. Соруководители с армянской и белорусской сторон заблаговременно согласовывают тему исследования, распределение обязанностей по проекту и совместный план-график работ. Заявки, поданные по одному проекту, должны иметь одинаковые названия проекта и одних и тех же соруководителей с армянской и белорусской сторон.

Согласованные заявки подаются одновременно: армянскими соруководителями проекта — в Государственный комитет по науке Министерства образования и науки Республики Армения, белорусскими соруководителями проекта — в Белорусский республиканский фонд фундаментальных исследований. Формы заявок устанавливаются каждой Стороной самостоятельно.

Несогласованные заявки или заявки, поданные только с одной стороны, а также после оговоренного срока подачи, не рассматриваются.

Правила участия в конкурсе ученых в качестве руководителей или исполнителей устанавливаются каждой Стороной самостоятельно.

2.3. Каждая Сторона проводит независимую экспертизу заявок согласно процедуре, принятой этой Стороной.

Итоговое решение принимается на основании совместного обсуждения результатов экспертизы. Количество научных проектов, поддерживаемых по результатам экспертизы, будет определяться исходя из возможностей бюджета каждой Стороны.

2.4. Продолжительность выполнения каждого проекта — два года.

Правила и формы отчетности устанавливаются каждой Стороной

հիմնարար հիմունքներ:

Մրցույթներին չեն թույլատրվում մասնակցել.

- հայտարարված ժամկետից ուշ ներկայացված նախագծերը,
- Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության պետական բյուջեներից արդեն իսկ ֆինանսավորվող նախագծերը,
- նախագծեր, որոնք արդեն ստացել են ՀՀԲՀՀ, ՀՀ և ԲՀ այլ հիմնադրամների և կազմակերպությունների աջակցությունը:

Կողմերը ապահովում են մրցույթների անցկացումը, հայտերի անկախ փորձաքննությունը և հաստատված նախագծերի ֆինանսավորումը՝ յուրաքանչյուրն իր երկրում:

Կողմերը ընդունում են նախագծերի կատարման հայտեր գիտնականների ստեղծագործական աշխատախմբերից:

2.2. Հայկական և բելառուսական կողմերի համաղեկավարները նախապես համաձայնեցնում են հետազոտությունների թեման, նախագծով նախատեսված պարտականությունների բաշխումը և ընդհանուր աշխատանքային պլան-ժամանակացույցը: Նույն նախագծի վերաբերյալ ներկայացված հայտերը պետք է ունենան նախագծի նույն անվանումը և համաղեկավարներ հայկական և բելառուսական կողմերից:

Համաձայնեցված հայտերը ներկայացվում են միաժամանակ /նախագծի հայկական կողմի համաղեկավարները՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե, իսկ բելառուսական կողմի համաղեկավարները՝ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ:

Հայտերի ձևերը Կողմերը հաստատում են ինքնուրույն: Չհամաձայնեցված հայտերը, ժամկետից ուշ կամ միայն մեկ կողմից ներկայացված հայտերը չեն ուսումնասիրվում:

Մրցույթում գիտնականների՝ որպես ղեկավար կամ կատարող մասնակցության կանոնները Կողմերից յուրաքանչյուրը հաստատում է ինքնուրույն :

2.3. Հայտերի անկախ փորձաքննությունը Կողմերից յուրաքանչյուրն անցկացնում է ըստ իր կանոնակարգի:

Վերջնական որոշումն ընդունվում է փորձաքննության արդյունքների համատեղ քննարկման արդյունքում: Փորձաքննության արդյունքների հիման վրա ընդունված գիտական նախագծերի տարեկան քանակը որոշվում է Կողմերի բյուջեի հնարավորություններին համապատասխան:

независимо.

Руководители групп армянских и белорусских ученых представляют промежуточные (годовые) и итоговые отчеты в Государственный комитет по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусский республиканский фонд фундаментальных исследований соответственно.

## 3. Сроки проведения конкурсов

3.1.Стороны принимают следующий график проведения конкурсов:
объявление и начало приема заявок на новый конкурс - <u>декабрь;</u>
окончание приема заявок - <u>январь;</u>
согласование Сторонами списков поданных заявок и проведение независимой экспертизы заявок – <u>февраль-март</u>;
обсуждение Сторонами результатов экспертизы и принятие совместного решения - <u>апрель</u>;

финансирование проектов и отчетность:
начало финансирования проектов - <u>май;</u>

представление руководителями проектов отчетов, проведение Сторонами экспертизы и утверждение отчетов — согласно правилам, принятым в Государственном комитете по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусском республиканском фонде фундаментальных исследований соответственно.

3.2. Перед объявлением очередного конкурса Стороны согласовывают текст объявления и уточняют конкретные сроки проведения конкурса.

## 4. Финансирование поддержанных проектов

4.1. Финансирование поддержанных проектов осуществляется по принципу: каждая

2.4. Յուրաքանչյուր նախագծի կատարման տևողությունը երկու տարի է:

Հաշվետվության ձևերը և կանոնները յուրաքանչյուր Կողմը հաստատում է ինքնուրույն:

Հայաստանի և Բելառուսի գիտնականների խմբերի համաղեկավարները ներկայացնում են միջանկյալ /տարեկան/ և ամփոփիչ հաշվետվություններ, համապատասխանաբար, ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամ

## 3. Մրցույթների անցկացման ժամկետները

3.1 Կողմերը ընդունում են մրցույթների անցկացման հետևյալ ամենամյա ժամանակացույցը.

- նոր մրցույթի հայտարարում և հայտերի ընդունման սկիզբ՝ <u>դեկտեմբեր</u>,
- հայտերի ընդունման ավարտ՝ <u>հունվար</u>,
- Կողմերի ստացած հայտերի ցուցակների համաձայնեցում և հայտերի անկախ փորձաքննության անցկացում <u>փետրվար-մարտ</u>,
- փորձաքննության արդյունքների քննարկում և Կողմերի համատեղ որոշման ընդունում՝ <u>ապրիլ</u>,

նախագծերի ֆինանսավորում և հաշվետվություն.

- նախագծերի ֆինանսավորման սկիզբ՝ <u>մայիս</u>,
- նախագծերի ղեկավարների կողմից հաշվետվություններ ներկայացնելը, փորձաքննության անցկացումը և հաշվետվությունների հաստատումը Կողմերը կատարում են ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի սահմանած կանոններին համապատասխան:

3.2 . Հերթական մրցույթ հայտարարելուց առաջ Կողմերը համաձայնեցնում են հայտարարության բովանդակությունը և ճշտում են մրցույթի անցկացման կոնկրետ ժամկետները:

## 4 Ընդունված նախագծերի ֆինանսավորում

4.1.Ընդունված նախագծերի Կողմերի կողմից ֆինանսավորումը իրականացվում է հետևյալ

Сторона финансирует в установленном порядке только участников своей страны.

Финансовая поддержка проектов будет осуществляться на безвозмездной и безвозвратной основе, вне зависимости от возраста, ученой степени, ученого звания и должности ученых-участников проекта.

Стороны обязуются ежегодно выделять в полном объеме средства на финансирование проектов, предусмотренные на текущий год.

4.2. Условием предоставления финансовой поддержки является обязательство ученых опубликовать результаты исследований в отечественных и международных изданиях с упоминанием о полученной поддержке от Государственного комитета по науке Министерства образования и науки Республики Армения и Белорусского республиканского фонда фундаментальных исследований.

4.3. Финансирование поддержанных проектов Сторонами будет осуществляться ежегодно, начиная с 2011 г.

Объем ежегодного финансирования отдельного проекта устанавливается каждой Стороной самостоятельно по результатам экспертизы заявки или промежуточного отчета на базовой основе средней величины научных грантов, принятых каждой Стороной.

## 5. Заключительные положения

5.1. Вопросы, связанные с реализацией данного Приложения к Соглашению, решаются путем переписки или на встречах представителей Сторон.

Условия настоящего Приложения к Соглашению могут быть дополнены и изменены по взаимному согласию с обязательным составлением письменного документа.

Стороны оставляют за собой право на расторжение настоящего Приложения к Соглашению. При этом Стороны обязуются выполнить взятые до расторжения Приложения обязательства по финансированию проектов.

Дополнения, изменения или расторжение Приложения к Соглашению оформляются соответствующими

սկզբունքով. յուրաքանչյուր Կողմ ֆինանսավորում է միայն իր երկրի մասնակիցներին: Նախագծերին ֆինանսական աջակցություն տրամադրվում է անհատույց և անվերադարձ հիմունքներով՝ անկախ նախագծի մասնակից- գիտնականների տարիքից, գիտական աստիճանից, գիտական կոչումից և զբաղեցրած պաշտոնից:

Կողմերը պարտավորվում են նախագծերի համար նախատեսված ընթացիկ տարվա ֆինանսավորման միջոցները յուրաքանչյուր տարի հատկացնել ամբողջ ծավալով:

4.2.Հետազոտությունների արդյունքները հայրենական և միջազգային պարբերականներում հրատարակելիս գիտնականները պարտավոր են նշել ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեից և Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամից ստացված աջակցության մասին: Այս դրույթը հանդիսանում է ֆինանսական աջակցության տրամադրման անհրաժեշտ պայման :

4.3. Ընդունված նախագծերի ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր տարի, սկսած 2011թ-ից:

Առանձին նախագծի տարեկան ֆինանսավորման ծավալը յուրաքանչյուր Կողմը հաստատում է ինքնուրույն, հայտերի կամ ընթացիկ հաշվետվությունների փորձաքննության արդյունքներին համապատասխան, ելնելով յուրաքանչյուր Կողմի ընդունած գիտական դրամաշնորհների ֆինանսավորման միջին չափից:

## 5. Ամփոփիչ դրույթներ

5.1. Կարգի իրագործման հետ կապված հարցերը Կողմերի միջև լուծվում են նամակագրության միջոցով կամ Կողմերի ներկայացուցիչների հանդիպումների ընթացքում:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Կարգի պայմանները կարող են փոփոխվել և լրացվել գրավոր փաստաթղթի ձևակերպման միջոցով:

Կողմերը կարող են դադարեցնել սույն Կարգի գործողությունը: Այս դեպքում Կողմերը պարտավորվում են կատարել մինչև դադարեցումը ստանձնած նախագծերի ֆինանսավորման պարտավորությունները:

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Կարգի մեջ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրությամբ և ուժի մեջ կմտնեն ստորագրման օրվանից :

протоколами, которые вступают в силу со дня их подписания.

5.2. Координацию действий по реализации данного Приложения к Соглашению осуществляют:

со стороны Государственного комитета по науке Министерства образования и науки Республики Армения — отдел планирования научных кадров, квалификации и содействия исследованиям ;

со стороны Белорусского республиканского фонда фундаментальных исследований — отдел зарубежных связей и информационного обеспечения.

Настоящее Приложение к Соглашению подписано «4» ноября 2010 г. в двух подлинных экземплярах, на русском и армянском языках, причем все тексты имеют одинаковую юридическую силу.

Подписи сторон:

За Государственный комитет по науке
Министерства образования и науки
Республики Армения

Председатель Государственного комитета по науке
Министерства образования и науки
Республики Армения

______________ Арутюнян С.Г.

М.П.

За Белорусский республиканский
фонд фундаментальных
исследований
Председатель Научного совета
Белорусского республиканского фонда
фундаментальных исследований

______________ В.А. Орлович

5.2. Սույն Կարգի իրագործման հետ կապված գործողությունների համակարգումը իրականացնում են.

- Գիտական կադրերի պլանավորման, որակավորման եւ հետազոտությունների բաժին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի կողմից,
- Միջազգային համագործակցության եւ տեղեկատվական ապահովման բաժին՝ Հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի կողմից:

Կատարված է 2010 թ. նոյեմբերի 4-ին, երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը՝ հայերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Կողմերի ստորագրությունները

Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեի կողմից

Հայաստանի Հանրապետության կրթության
և գիտության նախարարության գիտության
պետական կոմիտեի նախագահ՝

______________ Ս.Գ. Հարությունյան

Կ.Տ.

Հիմնարար հետազոտությունների
բելառուսական հանրապետական
հիմնադրամի կողմից
Հիմնարար հետազոտությունների
բելառուսական հանրապետական
հիմնադրամի խորհրդի նախագահ՝

______________ Օրլովիչ Վ. Ա.